Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Մ Ա Ր Ա Լ Ի Կ Ի   Ք Ա Ղ Ա Ք Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն

«12» դեկտեմբերի 2014թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Մարալիկի քաղաքապետարանի 2015 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ <<ՄՔ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1>>:

Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1, Մարալիկի քաղաքապետարան, 2-րդ հարկ հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 22-ը, ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Սաթենիկ Զաքարյանը:

Հայտերը կբացվեն քաղաք Մարալիկ, Մարալիկի քաղաքապետարանի շենքի 2-րդ հարկում, Մաղաթյան 1 հասցեով, 2014 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար՝ ռեգուլյար բենզինի ձեռքբերումը:

Մարալիկի քաղաքապետարանի 2015 թվականի կարիքների համար՝ ռեգուլյար բենզինի (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալներն և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցումով):

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մարալիկի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ maralik.shirak@mta.gov.am:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Ս. Զաքարյան
Հեռ.՝ 0-94-68-74-55
Էլ. Փոստ՝ satenzakaryan@mail.ru